Գործող, առողջապահական և անվտանգության ենթակոմիտե
Հունիսի 3, 2020, կեսօրից հետո ժամը 4-ին

Ներկաներ. Դեբբի Կակտա, Չառ Թաբեթ, Լարրի Քրոսս, Քյաթի Սեսինգհաուս, Մարիա Յուրիբի, Ստեյսի Քաշման, Սալլի Չյու, Թոնի Ֆրանկո, Ինգրիդ Ջեյմս, Սանդրա ԴիԲարրոս, Լենորա Ագիլերա, Վենդի Հարվել

Դեբբի Կ-ն աշխատում է Ալի Լոուի և Կարին Ուոնտլենդի հետ հարկաբյուջետային բաղադրիչի վրա: Ցանկացած անձ կարող է միանալ նրանց, միայն տեղեկացնել Դեբբիին:

Սալլին կավելացնի Դեբբի Կակտայի էլեկտրոնային նամակի նյութերը ենթակոմիտեի գուգլում:

Լարրի Քրոսս
● **Անձնական կահույքը** պետք է հանել դասասենյակներից (բազմոցներ, լոբով լցոնված աթոռները, այն ամենը ինչ փափուկ է): Այս իրերը հնարավոր չէ մաքրել:
● Բոլորի կողմից օգտագործվող խոհարարական պարագաները չեն կարող օգտագործվել:
● **Ուսուցիչների հանգստի** սենյակները չեն կարող բաց մնալ:

Ստեյսի
● **Գրասենյակների վարիչներն** անհանգստացած են իրենց պաշտոնի անդադար շփման պահանջի հետ և ցանկանում են **թափանցիկ միջնորմներով** պարփակել իրենց աշխտավայրը:

Լենորա
● **Կհանվի** կամ կպիտակավորվի՞ **ավելորդ գրասենղանները**:
    ○ Մտածմունքի թեմա – տարածքից դուրս պահեստավորելը խնդրահարույց է, իսկ տեղում թողնելը՝ ավելորդ մաքրության գործ:

Թոնի
● Մտահոգված է դասարանում աշակերտների սակավ թվով և ինչպե՞ս պետք է ուսուցանել բոլորին այդ կերպ: Ստեյսին նշեց, որ դասարանում աշակերտների թիվը մոտավորապես 25% -ով կպակասի:

Քյաթի Ս.
● **Սննդի ծառայություններին հարկավոր իմանալ, թե ի՞նչ է կատարվելու մինչև հուլիս ամիսը,** որպեսզի կարողանա պլանավորել սննդի մատակարարումը:
● Ամենալավ լուծումը կլինի սնունդ մատակարարել շաբաթը մեկ անգամ և հուսալ, որ ընտանիքները կբաժանեն այլ մի քանի օրերի վրա:
● **Դիմակներ** – մեկանգամյա օգտագործման, թե՞ կտորից: Արժեքի խնայողություն կկատարվի կտորե դիմակներ կրելուց, բայց պետք է հուսանք, որ այն տանը կլվանան:

Թոնի
● Ուսուցիչները/արհմիությունը չի ցանկանա, որ աշակերտները **դիմակ** չկրեն

- Լենորա – հասարակական հեռավորություն պահելը դիմակ կրելուց ավելի կարևոր է: Որոշ երեխաներ չեն կարողանալու դիմակ կրել:

Լենորա
- Արդեն գործող երեխաների խնամքի կենտրոնն առաջարկում է ցուցադրել, թե ինչպես են ընթանում աշխատանքներն ավելի մեծ մասշտաբով:

Դեբբի Կ.
- Հորաս Մեննը և մի քանի այլ դպրոցներ բաց են: Միայն 10 աշակերտ յուրաքանչյուր դասասենյակում: Առաջնահերթությունը տրվում է առաջնային աշխատողների երեխաներին: Ավելի շատ երեխա կընդունվի հուլիս ամսին:

Տեխնոլոգիայի բաժնի ենթակառուցվածք.
- Ռիկ Վ. – Տեխնոլոգիական երեքշաբթի – Անձամբ օգնություն ստանալու հնարավորություն աշխատակազմի և աշակերտների համար:
- Ստեյսին առաջարկում է **տեխնոլոգիայի վերաբերյալ ծնողական դասընթաց:**
- Ռիկ – 5-րդ դասարանցիների միայն կեսն է վերադարձրել սարքերը:

Առողջություն և անվտանգություն.
- Ստեյսի – **Ամենակարևորը հաղորդակցվելն է:** Փնտրում ենք հաղորդակցման տարբեր մեթոդներ ծնողներին ընթացակարգերի վերաբերյալ արդյունավետորեն տեղեկացնելու համար:

Արձանագրություն – աշխատում ենք քչացնել անձամբ կատարվող արձանագրությունները
- Մի քանի դպրոցներում բացել համակարգիչների սենյակները, որպեսզի ծնողները օգտվեն դրանցից:

Կազմակերպչական ծրագիր
- Ստեյսին ցույց տվեց իր կազմած աղյուսակը: Յուրաքանչյուր բաժին պետք է կազմի և ներկայացնի իր առաջարկները նույն ձևով:

Դեբբի Կ.
- Պետք է հանդիպել ավելի փոքր խմբերով և աշխատել մանրամասների վրա մինչև հաջորդ երեքշաբթի:

Հարցեր –
Լենորա –
- Առողջապահության և անվտանգության և բուժկետերը պետք է միավորվեն մեկ ենթակոմիտեի ներքո
- Ստուգել HVAC համակարգը
- Ֆիզկուլտուրայի դասընթացներ – ինչպե՞ս է այն իրագործվելու: Վնասվածքների և դասերից խոսափելու պատճառով, բուժկետեր այցելելը պայմանավորված է ֆիզկուլտուրայի դասի հետ: Պետք է վերացնել բուժկետի ավելորդ այցելությունները:
- Բուժկետերը և թե ինչպես կարող են դրանք ծառայել սովորական այցերի համար

(հնարավոր է, որ բուժքույրը դուրս գա սենյակից) ընդդեմ հիվանդ աշակերտների:

Լարրի

- **Ֆիզկուլտուրայի խցիկները** 3 հատով տեղադրված են մեկը մյոսի վրա: Շատ դժվար է աշակերտների համար զգեստափոխվել և իրարից հեռու մնալ:
- **HVAC ֆիլտրներն** արդեն փոխարինվում են նորերով 3 ամիսը մեկ անգամ: Հիվանդանոցային կարգի ֆիլտրներ կարող ենք գնել, բայց դրանք թանկ արժեն կամ էլ կարող ենք փոխել սովորական ֆիլտրներն ավելի հաճախակի: Լենորան կստուգի, թե արդյո՞ք ուղղորդություն է տրված այս հարցի շուրջ:
- **Խմելու ջրի շատրվաններ.** Ամենալավը դրանք փակելն է, բայց ինչպե՞ս մատակարարել աշակերտներին ջրով:

Ինչպե՞ս ստիպել աշխատակազմին դիմակ կրել: Լենորա – ասել է Մաթին, որ հրաման արձակի, որ բոլոր աշխտակիցները սկսեն դիմակ կրեն: Ստեյսին խոսել է տնօրենների հետ ստիպելու աշխտակիցներին կրել դիմակ և իրարից հեռավորություն պահպանել: Նաև, խնդրել է Մաթին նշել այդ մասին աշխատակիցներին ուղարկվող էլեկտրոնային փոստի նամակում:

Լարրի – հարցրեց Լենորային հասարակական հեռավորության և/կամ դիմակների վերաբերյալ: Լենորան ասաց, որ երկուսն էլ:

Երեկոյան ժամը 5:23